



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1999

Ա Ր Ա Վ Ո Ւ Յ  
 Հ Ա Վ Ո Ւ Յ  
 Ա Ր Ա Վ Ո Ւ Յ  
 Հ Ա Վ Ո Ւ Յ  
 Ա Ր Ա Վ Ո Ւ Յ  
 Հ Ա Վ Ո Ւ Յ

ԱՐ Ձ ԱԿ Ե Ւ Չ Ա Փ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Ա Ր Ձ Ա Կ Ե Ր Ա Փ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Մի՛տար Դաւմել, ո՛վ Աստուած,  
Ի ձեռս անմիտ զատողաց:

Ասիլով



28 1686

Ա. Գ. Բ Ո Ւ Բ Գ 4/1686-60

Ա. Գ րիգորիանի տըպարանումը.

1856.

Վրկու բանաստեղծ

(Եռելք բարեկամական Ա. Շիմորեանին)

Блаженъ незлобивый поэтъ,  
Въ комъ мало желчи, много чувства!....  
Некрасовъ.

Քաղցրախօ՞ս պովէտ՝ քու անոյշ լրզոն,  
Քնարըդ ներդաշնակ, հոգիու ըդայուն—  
Աշխար գրաւեցին. դափնեղարդ գլուխ  
Դու ժուռ ես գալի մարդկանց մէջ շքով:  
Քեզ սիրեց աշխար,—սիրեց սերտ սիրով,  
Արահետ ուղիդ փըռեց վարդերով.  
Համբաւըդ հեռու աշխարներ հասցուց,  
Քեզ արժանացուց դիւցազանց դասուց.  
Ու դեռ քու հոգին չէր ելլել մարմնից,  
Կա քեզ արձաններ կանգնեց մետալից:  
Քեզ սիրեց աշխար եւ սիրեց—իրօք,  
Օի անոյշ լեզուէդ չի լըսեց վատ խօսք.  
Լարերիդ երբէք չի տուիր դադար,  
Երբոր գովէլու ունէիր պատճառ.  
Տայց երբոր բասրել պէտք լինէր չարին՝  
Քընարըդ իսկոյն կախվումէր պատին.  
Քու ասպարէդն էր գինառաս ևընջոք,  
Քեզ պատումէին կանանց, կուսից հոյլ.

Վարդ էր տեսածըդ՝ վարդ էիր երդում;—  
Փըշից, տատասկից միշտ հեռի փախչում....

Այլ էր վիճակը մի այլ պովէտին,  
Անհաշտ թշնամի կարծած ամենին,  
Որին ըսկըսած փոքրից մինչև մեծ  
Վարդկութեան ցեղի անուանեցին ցեց:  
Դա՛ռն էր վիճակը, դա՛ռն էր կոչումը  
Այդ տարաբազդին, դրառում՝ ո՛չ տունը  
Ունէր նա հանգիստ, ծընընդեան օրից  
Սիրոյ մի նըշան չի տեսաւ մինից:  
Եղուն—մահաթոյն ասացին մարդիկ,  
Ճարտար խօսուածը—չարութեան գործիք,  
Եւ այն հանձարը, որ նորա բաժին  
Տուաւ՝ ի վերուստ՝—մարդիկ ջանք-արին  
Թաղել ցեխի մէջ իրանց վատ կենաց,  
Որի մէջ ինքեանք էին թաթախուած:  
Բայց նա միշտ հըպարտ՝ մընաց հաստատուն,  
Հանձարն էր նորա միակ ձեռնածուն,  
Անդողդոջ ոտքով անցաւ այս աշխար  
Հողին անվրդով, ճակատը պայծառ.  
Եւ մինչեւ վերջին բոպէն իր կենաց  
Սըրսից չի հանեց հառաջանիք, ո՛չ լաց:  
Բայց երբ-որ նորա անշնչցած մարմնն  
Օազգրելի սողնոց եղաւ լոկ բաժին,  
Եւ երբ շատ դարեր գընացին, անցան,—  
Լոկ այն ժամանակ մարդիկ իմացան  
Այն աղնիւ սէրը սըրտի մէջ փակած,  
Որ կոյր աչքերուն երբէք չերեւաց.  
Իմացան, որ կար նա եւ այնպէս սէր,  
Որ հաստ փաթաթով ծաղրի պատած էր.  
Որ քարկոծ արին այն խեղճ բըժիշկը,  
Որ ցաւով՝ նոցա բըժըշկից վէրբը:

## ՀԱՅԱՍՏԱՆ

(Աշխարհագրական).

Այս ընդարձակ եւ գեղեցիկ աշխարը պարփակած է Խփրատէս գետի  
և Կակասեան սարերի մէջ, որ հարաւի կողմից հասնումէ մինչեւ  
Դիարեկութիւն էր, որի ծագումը հասնումէ մինչեւ ԺԵ դարը Յի-  
սոսի-Քրիստոսի ծընունդից առաջ: Ամեն աղգի պատմութեան ըս-  
կիցը պատած է Ծանձր եւ անթափանցելի խաւարաւ, բայց քիչ մարդ կը  
գըտնուի, որ այս արժանայիշաստակ երկրի վրայ ծանօթութիւն առած  
ըլլինի Արբազան գրքերից: Ահօջի ժամանակները Միհրդասի եւ Տիգ-  
րամի Հռովմայեցւոց հետ ունեցած արխնահեղ մարտերը մեծ ըստ ձը-  
գեցին Հայաստանի վրայ, որին-որ սուրբ մատենագիրները «մարդկու-  
թեան աղգի օրօլցա» են անուանում: Հաս անգամ Ասորեստանի եւ  
Պարսից հզօր թագաւորները ուզել են լուծի տակ ձգել Հայաստան.  
Բայց քաջ եւ արի Հայերը միշտ աշխատել են իրանց ազատութիւնը  
պահպանել, մինչեւ-որ Հայաստան դարձաւ Հռովմայեցւոց գաւառ. յե-  
տոյ ընկաւ Պարսիկներու եւ Շառլուքերու ձեռք: Ահօջի ժամանակները  
Ռուսերը տիրապետեցին նորա մեծ մասին եւ հետզհետէ յառաջացնում  
են այդ աշխարհակալութիւնը:

Հայաստան ծածկած է մեծամեծ սարերով, որոնք ձուղ ձուղ բաժա-  
նուելով՝ մի բազմաձև եւ սրանչելի տեսարան տալիս են երկրին: Այ-  
րանիսի գագաթը բարձրութիւնով գրեթէ հաւասար է «Պիրինեան» (\*)  
երեւելի սարերին, որով եղանակը այնքան ցրտացած է, որ շատ անգամ  
ապրիլին, նաեւ մայիսին ձիւն է գալի այնուելու: Արդրումի ձմեռը ա-  
ւել ցրտաշունչ է քանիթէ Փարիզի, Հայաստանի հիւսիսակողմի ձմեռը  
աւել բարեխատն է եւ ամառը չափազանց տօթ (տաք): Դաշտերը եւ հո-  
վիտները պլատարեր են. բայց ողի տակ բընում եւ աճում են ամենայն  
սերմերը եւ պլատաները, որոնք-որ դուրս են գալի Փրանսիաի հիւսի-  
սային կողմը: Քանի-որ հայերը Ռուսաստանի հովանուորութեանը ներ-  
քոյ պաշտպանուած են բարբարոս աղգերի յարձակութիւններից՝ մեծ յա-  
ռաջադիմութիւն են անում երկրագործութեան մասին. շատ ժամանակ չի  
անցնիլ երբ-որ հայ երկրագործները քաջ ախոյան կըհանգիստանան Աւ-  
րոսաի լուսաւորեալ աղգերի առաջ: Հայաստանի տարածութիւնը գքեթէ

Հաւասար է Գրանսիախին: Բնակչաց թիւը համառմէ մինչեւ 2,800,000, գուցէ մի այդքան-էլ այսկողմ՝ այնկողմ՝ գաղթած լինին. բայց եւ այնպէս՝ քաղաքները սակաւամարդ են: Այսաստանի արուեստաորները չեն խրո-նրվում՝ մեր աշխարհի (յո՞ւ Գրանսիաի) պէս քաղաքներումը, եւ ըստ մե-ծի մասին զբաղած են մշակութիւնով: Բնակչաց անհոգութիւնը, երկա-րասուել մարտերը (կըսիւները), Քուրդերու յարձակմունքը՝ եղան գլխա-ւոր պատճառը, որ զրկեցին այս գեղեցիկ երկիրը այն մեծամեծ օգուտ-ներից, որ նա պէտք է ունենար անտառներից: Բայց այժմ Ոյուսաց կա-ռավարութիւնը մեծ ջանք է դնում պահպանել այն, ինչոր մընացելէ, եւ քաջալերումէ անտառը քութիւնը (լեօվօծտօ): Պէտք էր որ՝ ծա-ռաստնկութեան մասին նոյնը անէին այսաստանումը, ինչոր մեր օրերու-մը անումէն բոլոր բարձր Խտալիառումը, յո՞ւ ձանապարների երկու կողմը տընկեն պըտզատու ծառեր, որից մեծ օգուտներ կըյառաջանար ժողովր-դի համար, իսկ ծախսը այնքան թանկ չէր նստիլ նոցա:

Ամեն տարի Հայաստանից մեծ գումարի մեղքամնմ տանում են Ատամ-պօլեւ Ռուսաստան։ Մեղքի որակութեանը համար ասելու է տեղը է. ամենին յայտնի է, որ Հայաստանի մեղքը իւր հոտաւէտութեամբ եւ քաղցրութեամբ անհամեմատ է։ Ութենիների (թութի ծառերի) թիւը անհամար են. բայց տարաբաղդարար հայերը չգիտեն ապրշում մանել եւ կերպաս (шелковая материя) շինել։ Խմէ ձարտար արուեստագէտները վըստահէին ծաղկեցնել վաճառականութեան այս ձուղը՝ կարող կին մեծամեծ օգուտներ ձեռք-բերել։ Հայաստանի նման ոչ մի երկիր չի բացնում խաշնդեղ (ревень). Եւ մատուտակը (солодковый корень), որ առանց մշակի հոգացողութեան բանում եւ աճում է ստորին վայրելում եւ մանաւանդ։ Արաքսի երկայնութեամբ՝ հազարապատիկ գերազանցում է Ապանիտառ եւ Ռուսաստանում գուրս-եկածներից։ Հանքային բերքերու (минералы) կողմանէ դարձեալ Հայաստան հարուստ է։ Հին ժամանակներից սկսած՝ այնտեղի հանքերից (рудникъ) հանում են՝ արծաթ, պղնձ, մագնիս-բար, բորակ (селинтра), ծծումբ եւ կուպր։

Հայաստանի սարերի մէջ Արարատը ամենից բարձր եւ նշանաւորն է. նորա վրայ շատ մենաստաններ կան, որոնց մէջ է և երեւելի Առքբ-Յակոբ Հայրապետի վանքը, ուր իջեւանելեն Արարատի վրայ բարձրանալ ցանկացողները. բայց այդ ցանկութիւնը, ինչպէս յայտնի է, միայն պարս Պարրօտին յաջողեցաւ. 1830 ին. Այս գիտնական դասախոսը (պրօֆեսօր) ասումէ թէ Արարատի գագաթը 16,000 ոտնաչափ բարձրութիւն ունի եւ փերջանում է տափակ մակերեւոյթով, որի միջակտուրը (լամետր) 200

ոտնաչափ է: Ունեցած է սրբեմն կարելի է հաւատալ եւ այն են-  
թագրութեան եւ աւանդութեան Արբազան Գրքին, որ հաւատացնում է  
թէ յետ համատարած ջրհեղեղին. Եղայ Տապանը ինչաւ Արարատ  
սարի գագաթը: Ինայց Պարրօտ չէ տեսել Տապանի կտորները, ինչպէս-որ  
հաւատացրել են նորա՝ իբր թէ մինչեւ այսօր նշանած մնացել են:  
Թուռնֆուն-էլ փորձեց ելլել Արարատի վրայ՝ երբ-որ ճանապարհոր-  
դում էր Հայաստանումը, բայց անյաջողակ:

Հատ վլուկներ եւ անհամար առուակներ ողողումին չայաստանի երեսը, որ բաց ՚ի դորանից ունի նա եւ մեծամեծ լիճեր: Կորա գլխաւոր գետերն են՝ Արփա առ անհամար ազգիւմներ իւր մէջ սոնելով: Արգարումի մօտ կազմումէ մեծ գետ: Եթոյ գնումէ դէպի արեւմուտք, եւ ապա հարաւ, եւ խառնուելով: Տիգրիսի սիսի հետ եւ անցնելով միասին 250 մղոն (մօտ 1000 վեռատա), ընկնումէ Պարսիկ ծոցը: Տիգրիս նմանապէս սկսումէ Արարատ սարից: Արաքս կամ Արփաս և սու, որ առնելով իւր մէջ շատ վլուկներ՝ ընկնումէ կասպից ծով: Վուր (Քուռ) սկսումէ Վրաստանումը, յետոյ մրտնումէ չայաստան, խառնըլումէ Արարափի հետ եւ կորցնումէ անունը: Աշխարիս երեսին ոչ մի երկիր չի կայ, որ չայաստանի նման յաջողութեամբ ողողած լինի. առ այնուշ եթէ միտերաքերենք այն մեծամեծ օգուտները, որոնք կարող էին քաղել Աւրոպացիք իրանց քաղաքավարութեամբ եւ ձարտարութեամբ, այնժամանակ համարձակ կարելի էր ասել որ չայաստանը Ուտսաց ընտիր եւ ծանրակշիռ յաղթութիւնն է: Կատելի է, որ չայաստանի ամեն լիճերը աղի են. նոցանից ամենից լայնատարածը, որ Վան է ասվում՝ խիստ առատ է ձկներով. այս նորա ջուրը քանի գնումէ բարձրանումէ ափերից եւ ծածկումէ Շրազերը. այս յորդութիւնը է պատճառը, որ Վանի արուսրձանը (պրեմետե) գրեթէ անմարդաբնակ է, այս յայտնի էր Կամիրամը (\*): Համույի ժամանակները, որ դոյն այդ պատճառով հրամայեց ահազին թումբեր (պլոտին) շինել որոնց վլաստակները մինչեւ այժմ երես ու մէն:

❖այց այն-էլ սէտք է ասել, որ թէ եւ Ա անի սփերը խիստ բարձր են, այց ունին մի քանի արձակ տեղեր, ուրտեղաց-որ կարելի է սահմանիք պլոզմա) բանալ, որ նաւարկութեան համար ջրանցքներով ջուր բաշխուի րկրին: Հայաստանի վայրենի կենդանիները խիստ բազմաթիւ են, գորա լատձառը երկրի սակաւարդութիւնն է: Թէ որ անբնակ տեղերը կամաց ամաց բազմամարդանան՝ կենդանիները եւս կ'անցայտանան, որովհետեւ Հայաստան ըռնի վայրի անսպատճեր, ուրտեղ կարողանային նորա աշաստան գտնել: Ա, օչը, գոյլը, լուսանը (բայց), աղուէսը, շնագայլը կամ

ոսկեպոյն գայլը (տակալ), վայրի կատուն, նապաստակը, ճակարը (երօնու), շատ տեսակ թռչուններ եւ հաւեր սովորական են՝ չայաստանումը. բայց թիւնաւոր սողուններ հաղուադիւտ են: Այժեմսները (ըօրի) այնքան շատ չեն, ինչպէս-որ կատասի սարերումը, պատճառ-որ՝ Բարձր չայր (չայաստան) խիստ ցուրտ է: Հայաստանի տունին կենդանիներն են՝ ձի, ջուրի, եղջ գոմեց ուղու, էշ Ազը եւ գոմեցը մշակումն դաշտերը. ուղար եւ ջորին գործածնումն տեղէ տեղ բեր տանելու համար, էշը ծառայում է առել թեթեւ գործածութեան եւ կարճ տարածութեան:

Հայաստանի ձին (նժոյդ) խիստ մեծ անուն ունէր հին ժամանակներումը բոլոր Ազիաի մէջ. հասակը միջակ է, ինքը ուժեղ, խաղացկուն, անխոնջ եւ արագնթաց:

Հայոց բարձրը շատ տարբերումէ նոյն գրացի ազգերից. հայերը բըշ նութեամբ խիստ խաղաղ են, իրանց հաւատին ջերմեռանդ. բայց ուրիշ աղքերու պէտք չեն հալածում այլակրօններան: Խիստ ծանրաբարոյ են, աշխատասէր եւ գործունեայ. վաճառականութեան մէջ յաջողակ, թէ եւ գիտութեանց մէջ գեր եւ մեծ յառաջադրութիւն չեն ցոյց-տուել:

Աշկեղեցւոյ առաջին գարերէն սկսած հայերը քրիստոնեայ են. բայց չեն վերաբերում ո՛չ Յունաց եւ ո՛չ Քաթոլիկաց եկեղեցիներուն, այլ ունին իրանց համար Աջմիածնայ վանքումը սեպհական Պատրիարք, որին շատ յարգումն են:

Որուսիական Հայաստանի բնակչաց մէջ միայն  $\frac{2}{5}$  բորդ մասը հայեր են. մասցած  $\frac{3}{5}$  բորդ մասը մահմետականներ, յոյներ եւ լատինադաւաններ են. տեղ տեղ գրանվումն նա եւ հրէաներ, բայց նոյն առուտուրը այնքան յաջողսկ չէ, պատճառ-որ ինքեանք հայերը այդ մասին խիստ աչքարաց են: Բոլոր արեւելքումը եւ Որուսաստանի տանին ծակուծուկերումը հայերը իրանց ձեռքն են առել վաճառականութիւնը եւ մեծամեծ հարցատութեան տէր են գարձել:

Հայաստանցիք՝ թէ տղամարդիք եւ թէ կնիկ-արմատները առհասարակ թէ աղուականաց եւ թէ վաճառականաց վիճակի մէջ՝ սիրումն շքերը եւ ժամնկադին հագուստներ. ընդհակառկն՝ արուեստաւուների եւ մշակների շորերը սոսկական են, բայց մաքուր: Օգեստի ձեւը ըստ ամենայնի նման է թուրքաց, միայն այն տարբերութեամբ, որ հայոց կանանց գլխազարդը աւել բարձր եւ կոնաձեւ է, որի ցածի կողմը վերջանումէ մետաքսէ բոլորակով. ճակատը բաց է մնում: Այս գլխազարդը կրկնապատկումէ հայերու բնական գեղեցկութիւնը: Բայս Հայաստանի հայերը ասել, որ նա անառիկ է: Բնակչաց թիւը համառումէ մինչեւ 20,000:

Վնանիք գլխի վրայ դնում են մետաքսէ շրջանակ եւ նորա վրայից ձգում են քող: Տղամարդիկ սովորաբար արտախուրակ (տօրօնա) գործածում են, որ զարդարած է լինում թանկադին ժամանակներով եւ փունջերով, ուրնք ընկնելով նոյն ուսերու վրայ՝ չափազանց գեղեցկութիւն են տալի գլխազարդներուն: Այս եւ կանայք առհասարակ գործածումն երկայն զգեստ:

Հայերու սեպհական արժանաւորութիւններն են՝ մաքուր բարձր, սակաւագիտութիւնն (յմբրունութիւն) եւ արնտեսութիւն:

Հայ վաճառականը որբան-էլ հարուստ չլինի, թէ եւ յարտաքուստ, առերեսը ստիպուած է շատ անգամ շռայլութեամբ ապրելու, բայց նորա աստղնին ապրուստը միշտ չափաւոր եւ բարեկարգ է. այս հանգանակը պատճառ է տուել շատերին կարծելու, որ նոքա աչքածակ եւ արծաթամուլ են. բայց իրօք նոքա միայն տընտես են, պատճառ-որ հայերը եւ նոյն մէջ մանաւանդ վաճառականները եւ լումայափոխները շատ անգամ ցոյց-տուել են մեծանձնութիւն եւ անընչափիրութիւն:

Հայաստանի գլխաւոր քաղաքները գորա են.—

1) Այս գլուխմ: այս մեծաշէն եւ հին քաղաքը հիմնած է բարձրադիր եւ ցուրտ տեղաւումը՝ չորս կողմից սարերով պատած: Կորա մէջի հայերութիւը սակաւ է քան թէ թուրքաց: 1827ին ուսուերը առ ժամանակ տիրապետեցին նորա: Ունի միջնաբերդ (պատճեն, երեմ) մի բարձրաւանդակի վրայ: Վաճառականութիւնը մեծ եւ ընդարձակ է: Ունի քաղաքը լայնատարած է, բայց խիստ վաստ շինած. տները ցած, տղեղ, տափակ կտուրներով: Ըրջակայ տեղերը ընդհանրապէս քաղաքարուտ, անջրդի եւ ամայացած են: Բնակչաց թիւը 80,000 է:

2) Վան շինած է այդ անունով ծովակի ափ: Կորա հիմնարկութիւնը ընծայումն էն Կամիրամ դշենոյին: Վաղմաժիւ յիշատակարանները, որոնք մի ժամանակ զարդարում էին նորա՝ այժմ աւերտուած ընկած են, եւ այդ աւերակները միայն կարող են մէջ գաղափար (անք) տալ նորա սուածուայ շքերութեանը վրայ: Անջապերգը շինած է մի բարձր ասկառամի վրայ եւ սոգ պատճառաւ համարձակ կարելի է ասել, որ նա անառիկ է: Բնակչաց թիւը համառումէ մինչեւ 20,000:

3) Խրեւան հիմնած է այնտեղ, ուր-որ Արարափի եւ Օանգիի ջրերը խառնվումն իրար հետ. գորա մօտից անցնումէ մի երկորդ եւ աննշան գետ, որից արուեստական կերպով գուրսա-համած են ջրանցքներ, որոնք երաշտի (անձրեւի պակասութիւն) ժամանակները ցօղումն սոցիները եւ պարտէները: Աերդը, որ պաշտուանումէ քաղաքը՝ խիստ ընդարձակ է:

Դորա մէջ են կրպակների (դուքսն) մեծ մասը, ուր-որ արուեստաւորները գալիս են աշխատելու. իսկ երեկոյան պահու գնում են քաղաք, ուր նոցա բնակարանն է. Երեւանի չորս կողմը պատաժ է փլատակներով, որոնք վերաբերվում են նախնի դարերուն. Երեւանի գեղազուարձ եւ բարեբեր դաշտերումը տընկած են գեղեցիկ այգիներ. Արարատ սարը հեռու չ նորանից. Բնակչաց թիւը 15,000ի մօտ է:

(Քրանսերէնից թարգմանած).

### Հայ-աղջիկ

Դու տեսե՞լ երկինքումը  
Պայծառ լուսին ծագելիս,  
Կամ թէ կանանք տերեւի մէջ  
Կարմիր ծիրան փայլելիս.

Դու տեսե՞լ ես ծաղկոցումը  
Կարմիր վարդը փլթլթած,  
Ըուշան, մեխակ ու նունուֆար  
Չորս բոլորը պար-բըռնած.

Բայց լուսինը խիստ խաւար է  
Հայ աղջկայ առաջին,  
Օդիրան, մեխակ ու նունուֆար  
Չամեն նորա մի պաշին:

Երկու թըշին վարդ են նըստել  
Շերմակ ճակտին՝ մի շուշան.

Ժափիուը բերնից ցած չի գալի, —  
Անմեղութեան է նըշան:  
Տե՛ս, նա առաւ կարմըբելով  
Իր ընկերից դահիրան,  
Դրըմդրըմբեցուց փափուկ մասով  
Ու ըսկըսեց լեզգին կան.

Վազուք մէջքը ծառի նըման  
Տատանումէ գեղեցիկ,  
Մէկ թըտչումէ նա անգուման,  
Մէկ գլումէ խիստ մեղմիկ:

Հալվումէ խեղձ կտրիչների  
Սիրտը նորա նայելով,  
Ծերն իրան անիծումէ,  
Որ ծերացաւ խիստ շուտով:

### ՄԽՆԹԱՐ ԱԲԻ ԱՅՑ

Ամենին յայտնի է, որ Առորբ-Անորոպ յօրինեց (Հնարեց) մեր այբբենը Երորդ դարուն, որից յետ մի ամրող դար հայոց գրականութեան (լի- թերատուրա) համար ոսկի էր անուանվում: Թէ եւ նորանից յետոյ մինչեւ ԺԿ երորդ դարը հրաշալի գրուածներ անպակաս էին, բայց չիկար արդին այն եռանդը (յըրդի), որով վառուած էին Առորբ Գրոց թարգմանիչք, եւ հետպէտէ անհետանումէին աղգային գրականութեան ասպարիզից հայ- կարանութեան քաջ ախոյանները, այնպէս որ մինչեւ ԺԿ երորդ դարը, երբ-որ մեր քաղաքական գոյութիւնը աւերուեցաւ, մեր աշխարը ոտնակուս եղաւ՝ մի հատ օրինաւոր գրուած չէր գրանըլումը մեր լողուումը, մի հատ վարժատուն չի կար, ուր-որ երեխայք կարողանային կրթուել բայց ինչ եմասում, ցանկութիւն-էլ չի կար աղքի մէջ.՝ այնքան էր նեղութիւն կրել թշուառ Հայաստան:

Երբ-որ ԺԿ երորդ դարից յետ հայոց գրականութիւնը առաւել եւ ա- ռաւել սկըսեց նուազել ԺԿ երորդ դարումը շատ մարդիկ, ինչպէս՝ Յա- կոր Լշմիածնեցին, Կոլոդ Ատամանոցին և. շատ աշխատեցան, որ նորա նորածնութեանը ձեռնոտու լինին. բայց վերին Խնամքը ուրիշ ժամանակի եւ ուրիշ մարդու նշանակել էր այդ երեւելի գործի կատարումը: Այդ ժամանակն էր ԺԿ երորդ դարը եւ այդ մարդը՝ Անիթար Աբրան:

Անիթար ծնաւ 1676 ին, փետրուարի 7 ին, Անրաստիա քաղաքի մէջ: Հօրը անունը էր Պետրոս Անուկեան եւ մօրը՝ Հայրիստան: Առաջի կրմութիւնը ստացաւ երկու բարեկրօն կոյսերից, որոնցմէ մինի անունը Աննասէ էր, իսկ միւսինը՝ Անրիամ: Հատ աշխատաւէր եւ պարկէշտ մանուկ գոլով՝ 14 տարեկան սարկաւագ ձեռնադրուեցաւ, եւ 20 տարեկան քահանաց: Փոքր ինչ ժամանակից յետ ստացաւ վարդապետական գաւազան եւ այդ բուէից մի վեհ (վզվահենոյ) միտք ծնաւ նորա մէջ. այդ միտքն էր կրօնական կարգ (օրենք) հիմնել որոյ միջնորդութիւն Հայոց աղքի մէջ եկեղեցական եւ հոգեւոր լուսաւորութիւն մուծանել: Այդ պատճառաւ գնաց Ատամանու եւ ուրիշ տեղեր, որ հայոց մեծամեծաց ձեռնոտուու-

թեամբ կարողանայ իրա մըտադրութիւնը (պահքութիւնը) կաստարել: Բայց նուրա ճիգը ոչ մի տեղ չի յաջողեցաւ: Ա երջապէս բնակեցաւ Ստամպօլումը եւ իւր հիանալի գրուածքներով 16 հաստ աշակերտ ժողովից, որոնց հետ թարգմանեց Թուլմաս Վեմբացիի շարադրութիւնը, եւ գիրք կազմելով իրա ապրուստը ճարումէր: Այդ ժամանակ Ստամպօլի հայոց Պատրիարքն էր Աւետիքը (\*), որ մեծ թշնամի էր լատինահաւատներուն: Տեսնելով Անիթարի լատին կրօնառորներու մօտ շուտ շուտ գնալդալը, նմանաւուին նորա քարոզների մէջ զանազան կոստածելի միտքեր սըպրոփելը՝ իւր սովորութեամբ հրամացեց, որ զինուորները երթան բրոնեն նորա եւ բերեն իւր մօտ Անիթար լու հասկանալով վտանգը՝ կազմարարական կահկարասիքը հարեւաններու սկահ-տուեց, ու ինքը դնաց Խղուխաններու (\*) մօտ, խնդրելով, որ նորան մի սեներակ տան: Բայց նորա երկնչելով տեսլութիւնից՝ հրաժարուեցան, եւ խորհուրդ տուին, որ Փրանսիացւոց դեւապանի (ուօլանիկ) մօտ երթայ: Անիթար վտանգը դլուխը առած դնաց գեսապանի մօտ, բայց որովհետեւ Կապուցիններու (\*) վանքը հետու չ'էր, բնակեցաւ այնուեղ իւր երկու աշակերտի հետ: 1701 ին սեպ 8 ին հաւաքեց աշակերտներուն եւ Ստաուածածնայ հրաշափառ օրը առաջարկեց նոցա կուսակրօն կեանք ընդունել, որի յիշասակ ամեն տարեդարձին (գօօվապա) տօնել այդ նշանաւոր օրը: Մուսօր Անիթար ուղարկեց աշակերտներին մի-մի, երկու-երկու Ոօուա (Պելոպոնէզ կողզի) եւ ինքը սեներից յետ վաճառականի հագուստով նստաւ նառ եւ ճանապարին ալեկոծութեան հանդիպելով՝ հասաւ: Օ անժա կողզի: Տեսնելով-որ այնուեղի օդը շատ բարեխառն է դրեց աշակերտներուն, որ նոքա տեղեակ յայտնեն Ոօուա ողի մասին, որ կարողանայ երկուսից մինը ընտրել: Երբ-որ իմացաւ, որ թէ եւ Ոօուա օդը աւել ցրտաշունչ է, բայց այնուեղի Վենետիկեցւոց իշխանը լաւ ընդունելութիւն է արել նոցա՝ 1703 ին փետրուարի ամիսին գնաց Ոօուաի Անիթն քաղաքը, ուր-որ իշխանը նորա աղաջանքին ինջելով՝ ընծայեց նորան եկեղեցի եւ վանք շինելու եւ ապօնելու տեղ, նա եւ մի ամբողջ գլուղ եւ մի ուրիշ գլուղ-էլ մասը: Յետոյ սկսեց իրա աշակերտներին կամաց-կամաց կամնի տակ ձգել կրթելով նոցա քերականութեան, աստուածաբանութեան եւ փիլխոփայութեան մէջ: Ս շակերտներից միքանիսին ուղարկեց Հռոմը՝ խնդրելով Անիթնա ԺԱ երորդ Պապից յօժարութիւն Սուրբ-Վենետիկուի (\*) կարգի ձեւով կրօնաւորաց կարգ հիմնելու: Եւ երբ-որ թոյլուութիւն ստացաւ՝ եւս առաւել սկսեց իւր աշակերտներուն կրթել եւ այդ կերպով խիստ սիրելի եղաւ բոլոր քաղաքացւոց աշքին իւր համեստ վարքով: Թու եւ Անիթար վողի մասին

մէծ կարօտութիւն էր քաշում, բայց յոյար Աստուծոյ Վրայ դնելով՝ ինքը իրան մըսիթարում էր: Ա չա' այդ ժամանակները ընդունած պիտի լինի նա լատինակրօնութիւնը (քաթօլիկութիւնը): Բաւական չի համարելով այդքան նեղութիւնները՝ Անիթարի թշնամիք նամակի գրեցին Հռոմը; որով ամբաստանում էին նորան: բայց նոցա ջանքը՝ ի գերեւ ելաւ:

Այդ ժամանակ սաստիկ մարտ (կախ) բացուեցաւ Վենետիկեցւոց եւ Թուաքաց մ.ջ. եւ Անիթար կարծելով գուցէ Անիթն քաղաքը առնուի՝ 7 աշակերտ թողեց Անուաի մէջ վանքը պահելու համար, մնացեալ 14ի հետ գնաց Վենետիկ, ուր վարձով (քրէհով) բլուեց մի տուն: Պէտք է իմանալ որ այդ միջոցին նորա ունեցած-շոնեցածը 250 զուռուշ (պատրի) էր, որ Ուուսի փողով 50 ռուբլի թղթադրամէ: Երբ-որ Թուաքերը առին Ոօուան եւ քանդկցին նորա վանքը եւ եկեղեցին՝ նա ձեռնամուխ եղաւ մի նոր վանք հիմնելու: Վենետիկի ծերակոյտը (սենատ) ընծայեց նորան Սուրբ-Ղազար կղզին, ուր-որ այդ անուամբ հիւանդանոց կար: Անդտեղ շինեց նա 1747 ին մի գեղեցկաշն վանք եւ նորոգեց եկեղեցին: Անիթարի թշնամիք տեսնելով նորա յառաջադիմութիւնը՝ վերատին ամշաստանութեան (ծոհօչ) թուղթ գրեցին Հռոմը: Պապը կանչեց նորա դաստաստանի: բայց Անիթար արդարացուց իրան Պապի առաջ, որովհետեւ իրաւ անմեղ էր, եւ մեծ պատուով գարձաւ Վենետիկ, ուր վանքի մէջ մի փոքրիկ գլավոց եւս բացեց: Այդ ժամանակից յետ մինչեւ իւր մահը (1749) Անիթար անձանձիր պարապում էր շարադրութիւններով եւ թարգմանութիւններով, որոնց մէջ գլուստորները գոքա են՝ մեկնութիւն Աւետարանին Անատէի եւ մեծ բառարանները, որոնց նման այն ժամանակները ոչ մի ազգ չ'ունէր: Անիթար իւր երկար կեանքումը շատ նեղութիւններ եւ հալածանք քաշեց, բայց հայրենաաիրական ոգւով վառուած ամեն բան մեծահոգութեամբ տարաւ, եւ իւր միաբանութիւնից անուանեցաւ Արբայ Հայր:

Ոէէ եւ այդքան մեծագին արժանաւորութիւններ ունի, եւ նորա անդիւնքը մեծապէս ձեռնուու եղան մեր ազգի լուսաւորութեանը, բայց արդարասիրութիւնը պահանջում է մեզանից արտաստոնքը աչքերիս եւ կոկիծը սըրտերիս՝ չի մոռանալ այն վասար, որ մեզ հասցուց նա լատինականութիւն ընդունելով: Անչեւ այն ժամանակ մեր ազգը թէ եւ տգէս, թէ եւ ցրուած, մի հաւատ էր գաւանում եւ համարում էր իրան հարազատ որդիի Լաջմանի Սուրբ-Աթոռին. բայց դորանից յետ հաղարաւոք բաժանուեցան իրանց բուն հաւատից, թողին իցանց եկեղեցին եւ այլաղաւանների հետ միասորեցան: Հաստ դառնացան դորա վերայ լուսաւորչակրօնք, տեսնե-

լով իրանց եղբարքը ըստ մկրտութեան սուրբ աւագանին հեռացած իրանցմէ, եւ դարերով պաշտած սուրբ դաւանութիւնը ուրացած նոցամին։ Այս այստեղից են այն կուները, որ մենք տեսնում ենք բոլոր անցեալ դարու ընթացքումը, այստեղից են այն անհաշտութիւնները, որ ծագեցան հարիւրաւոր խաղաղասէր գերդաստունների մէջ՝ որովհետեւ ընկեր ընկերից բաժանուեցաւ եւ քոյր եղբօրից հեռացաւ։ Թէ եւ ամեն բարեմիտ չայ (ի հարկ է լուսաւորչակրօն) անցնիւր երախտապարտ է համարում իրան յարգելի գիտնական միսիթարեան կրօնաւորներուն եւ մանաւանդ իրան-Աքրա-Հօրը, բայց մի եւ նոյն ժամանակ չի դադարում առատօրէն դուրս-թափել սրաէն հառաջանք եւ ափսոսանք, որ այդպիսի ժրաջան մեղուններ մեր անհոգութեամբ փախցրինք մեր գրականութեան աղքատիկ փեթակէն (չլեզ), որոնց մեղրը այժմ ծանր գնով ենք ձեռք-բերում, իսկ խայթի չները միշտ պատրաստ են մինչեւ՝ ի մահ ծակծըկել մեր տըկար մարմինը թռո՛ղ միւմները ասեն, թէ այդքան օգտաբերութեան առաջ միւս վասաները ոչինչ են. բայց արդարասիրութիւնը ստիպում է մեղ ջրել այդ կարծիքը. պատճառ-որ՝ լուսաւորութիւնը, թէ եւ փոքր մի ուշ, բայց էլի իւր ձանապարով կ'երթար, որովհետեւ այդ ժամանակներումը արդէն յայտնի երեւում էր բարոյական (մօրալինի) սթափութիւն։

Թողնենք այս տիրալի յիշատակները եւ դառնանք չարց Միսիթարեանց գլխաւոր տշխատութեանցը։ Կախ եւ առաջ միսիթարեանք դարձուցին իրանց ուշադրութիւնը (անուման) բառարաններ եւ քերականութիւններ գրելու վրայ, գիտելով որ միայն նոցանով կարելի է լեզուի մաքրութիւնը պահպանել։ Ապա սկըսեցին գեղեցիկ տիպով մեր նախնեաց հեղինակները (ավորք) լրյա-ընծայել եւ տարածել ազգի մէջ, որով նորոգուեցաւ հին հայոց յըստակ ճաշակը եւ ամեն հայ շատ կամ սակաւ ծանօթութիւն ստացաւ իւր հեղինակների վրայ։ Միսիթարեանք մեծ ճիգով պարապեցան օտար լեզուներով, դք՝ Յունաց, Լատինաց, Խոտալացոց։ Նոցա պարապմանց պըտուղներն են՝ չոմերոս, Պլուտարքոս, Վիրդիլոս և 1812 ին սկըսեցին ֆրասերէն եւս սովորել եւ այն ժամանակ տըպուեցաւ։ Աւգերեանի երկու հատոր բառարանը, Նոյն լեզուից ժարգմանեցին Ուոլէնի ահագին պատմութիւնները, Տելեմոքի արկածքը (Փենելոնի), Բոսսուէի ընդհանուր պատմութիւնը, Կրտսերոյն Անաքարսեաց ուղեւութիւնը (պատեշտեան) եւ շատ ուրիշ հեղինակութիւններ։ Չուզելով ոչ մի լուսաւորեալ լեզու անտես-անել սկըսեցին անգլիերէնով-էլ պարապել որի պտուղները եղան՝ երկու հատոր բառարանը (Տ. Աւգերեանի), Ավտոնի «Դրախտ Կորուսեալը», Կիւնգի «Գիշերային խորհրդածութիւն-

ները» և՛ւ։ Այսու ամենայնիւ մեղ զարմանալի է թվում՝ ի՞նչ պատճառաւ Գիրմանացւոց լեզուն անտես է արած. թէ եւ Գէսների «Աահ Աքելին» ունին թարգմանած, բայց մեղ կասկածելի է երեւում, որ բնագրից լինի, պատճառ-որ աւել մօտ է ֆրանսերէնին։ Եոցա ուստերէն հիմնաւոր իմանալը ձըշտիւ չգիտենք. միայն թէ հատուկտոր բաներ ժամանակ առ ժամանակ տեղաւորելով «Բազմավէս» օրագրի (յորիալ), մէջ՝ մեղ իմացնում են, որ այդ լեզուից-էլ զուրկ չեն։

Գիտելով մեր լեզուի ուրիշ արեւելեան լեզուաց հետ ունեցած կապակցութիւնը՝ միսիթարեանք մեծ ջանքով պարապում են Պարաից, Աքրաբացւոց նա եւ Անսակրիտի լեզուներով։ Որովհետեւ հայերու մեծ մասը թէ ուրբաց տէրութեան հպատակ (պուճանի) են, եւ գուցէ միաբանների մեծ մասն-էլ նոյն վիճակից են՝ առաւել դիւրին հաղորդակցութեան համար թնութաց լեզուն մեծ կատարելագործութեան մէջ է վանկումը։

Մէր գրաբառ լեզուն այն կատարելագործութեան մէջ է, որ արդէն ասելին եւս աւելորդ է։ Մշտագալար կումընան ամեն հայի սրտումը հ. Աւետիքի, հ. Խնձիձեանի, հ. Աւգերեանի, հ. Այլազովսքիի եւ այլոց անունները, որոնք կարող են հայոց լեզուի վկայ ասուել որոնց գրուածքը (հայկաբանութեան կողմանէ) ոչինչով չեն յետ-մընում։ Ե երորդ դարու հեղինակներից։

Թէ եւ մեր ասածը օրէնք չի կարող լինել բայց ամեն ուսումնական չայ կարող է վկայել այս որ՝ ո՛չ գրաբառ լեզուն եւ ո՛չ հանրագիտական (անվանութեան) ուսումը այնքան ծաղկած տեսնում ենք որպէս եւ իցէ չայոց վարժատուններումը, որքան ծաղկած են նոքա Սուրբ-Ղազարի պարբռսքի ներսը։

1773 ին միսիթարեան միաբանութեան մի մասը տեղափոխեցաւ Թիւտա եւ այնտեղից Վիենա։ Այս տեղափոխութեան իսկական պատճառը չիմանալով՝ չինք ուղում երկմշտի ապացոյցներ բերել-ի՞նչ էր շարժառիթը (պօջա) նոցա զատուելուն. բայց ուրախութեամբ սրտի տեսնում ենք, որ այդ փոքրիկ հատուածը օրէ օր աճում եւ ծաղկում է. գուցէ մի օր այդ տեղափոխիկ տունկը աւել պըտղաբեր լինի քանի թէ նա, որ բնիկ հողի վրայ մընաց. Դոցա գովելի աշխատութիւնը գլխաւորապէս «Աւրոպաս լրագիրն է. բացի դորանից ունին շատ ուսումնական աշխատութիւններ աշխարաբառ լեզուով, որոնք ըստ մէջի մասին լրյա-ընծայութան «Աքրամեան ընկերութեան» ծախտով։ Այս ամեն արդիւնքները բըզեցան մի մարդու հանհարէ (րենի)։ Խաղաղութիւն ուկերաց քոց մէջդ Միսիթար։

Առաջներ

- 1). Այլն առողուն շուտ զարթօղը  
Ծախու չետալ ոսկի օղը:
- 2). Եղուն առանց ոսկու է,—  
Մարդուս մշքը կը կոտրէ:
- 3). Ովոր տէր չէ ալ օդա զի՞ն՝—  
Տօպան կ'առնու կընակին:
- 4). Արնկայ խումաշ շալաւը էրկան (մարդու) օհախը կընարէ:
- 5). Օերանաս՝ ծերին խաթրը կ'իմանաս:
- 6). Վը ռմը ռասը փետիլսելքն Օ ատիկը չի մօտիկնալ:
- 7). Առողուն ելլար երես-խաչով՝ բանիդ կէսը արած է:

Ինձ համար չէ.

(Կուէր Գրիգոր Անշվելեանի բարի յիշատակին:)

Ինձ համար չէ գարնան գալը,  
Ինձ համար չէ ծառի ծաղկելը,  
Ուրախութեան սրտի գրգիռը,  
Ո՛չի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ բարեկամաց  
Վէկտեղ սիրով տօն կատարելը,  
Օ ատիկ օրուայ ուրախ ասելը  
«Բրիստոսյարեաւ» չէ ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաղդը,  
Ինձ համար չէ երջանկութիւնը,  
Աւ մըայօն կուսի աշերը,  
Կոցա արցունք չե՞ն ինձ համար:

Ինձ համար չէ ծնօղաց լացը,  
Ինձ համար չէ աղջկայ տիրիլը,  
Գերեզմանիս վրայ արտասուիլը  
Բարեկամաց՝ չէ ինձ համար:

Ինձ համար չէ փայլուն լուսնի  
Անտառու սար լսասաւորելը,  
Գարնան վարդի երդչի տաղեղը—  
Սոխակ ու վարդ չե՞ն ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը,  
Վերթամթշնամեաց պատերազմը,  
Աւ մահառիթ սպանիչ գնդակը  
Անդ պատրաստած է ինձ համար:

ՀՀ Ազգային գրադարան



NJ 0349385

